



**Փոքր բիզնեսի աջակցության թիմ**

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Ցիտադել Բիզնես Կենտրոն, Տերյան փ. 105/1, 407 սենյակ, ք. Երևան 0009, Հայաստան

Հեռ.՝ +37410 514802/03, Ֆաքս՝ +37410 514810

Էլ. փոստ՝ [knowhowarmenia@ebrd.com](mailto:knowhowarmenia@ebrd.com) Վեբ-կայք՝ [ebrd.com/knowhow](http://ebrd.com/knowhow)



Խորհրդատվություն փոքր բիզնեսներին  
«Ընդլայնեք Ձեր խորհրդատվական բիզնեսը» դասընթացների շարք

Ձգտու՛մ եք ընդլայնել  
խորհրդատվական բիզնեսը:  
*Իմացեք, թե ինչպես:*

Ձեռք բերեք բիզնեսի կարիքների հատկորոշումից մինչև հաջողված առաջարկ  
գրելու համար անհրաժեշտ հմտությունները՝ սկսելու, զարգացնելու և  
Ձեր փորձառությունն ու գիտելիքները շահութաբեր խորհրդատվական բիզնեսի վերածելու համար:



**European Bank**  
for Reconstruction and Development

# Խորհրդատվական բիզնես սկսելուց մինչև լավագույն փորձի մասին խորհրդատվության տրամադրում. մենք գիտենք, թե ինչպես:

Խորհրդատվական բիզնես սկսելուց մինչև լավագույն փորձի մասին խորհրդատվության տրամադրում. մենք *գիտենք, թե ինչպես:*

«Ընդլայնեք Ձեր խորհրդատվական բիզնեսը» ուսումնական դասընթացների շարք է, որը փոխանցում է արդյունավետ և ազդեցիկ խորհրդատվություն իրականացնելու, ինչպես նաև հաջողված խորհրդատվական բիզնես վարելու համար առանցքային հմտությունները, ռեսուրսները և մեթոդները: Այս դասընթացները տրամադրում են այն նուր-հատում, որն անհրաժեշտ է խորհրդատվական կարիերա սկսելուց հետո այն շահութաբեր բիզնեսի վերածելու համար, և օգնում են Ձեզ բարձրորակ խորհրդատվություն տրամադրել, որի համար պատրաստ են վճարել փոքր և միջին ձեռնարկությունները:


Ինչպիսին էլ լինի Ձեր փորձառության մակարդակը, մեր ուսումնական դասընթացները տրամադրում են լավագույն ուսումնական խորհրդատվական գործիքակազմերը և հենքերը, որոնք կօգնեն Ձեզ հետամուտ լինել Ձեր նպատակների իրականացմանը և ստեղծել

կայուն զարգացող խորհրդատվական բիզնես: Այսպիսով, լինեք Դուք փորձագետ, որը ձգտում է այս գիտելիքն օգտագործել որպես պրոֆեսիոնալ խորհրդատու, կամ երիտասարդ խորհրդատու, որը փորձում է կատարելագործել իր խորհրդատվական հմտությունները, կամ խորհրդատվական ընկերության ավագ աշխատակից, որը ցանկանում է ավելի իմանալ նոր մասնագիտացումների մասին, կամ խորհրդատվական բիզնեսի սեփականատեր, որը ձգտում է բարելավել իր բիզնեսի մոդելը, կարող էք մասնակցել այս դասընթացին՝ կատարելագործելու Ձեր ներկայիս աշխատակարգերը:

Մենք առաջարկում ենք վեց դասընթաց.

- Խորհրդատվական բիզնեսի հիմնումը,
- Կառավարման խորհրդատվության հիմունքներ,
- Խորհրդատվական բիզնեսի կառավարում,
- Կառավարման խորհրդատվական ծառայությունների մարքեթինգ և վաճառք,
- Բիզնեսի դիագնոստիկա,
- Խորհրդատվական ծրագրի կառավարում:

Դուք կարող եք մասնակցել մեկ կամ չորս կամ բոլոր վեց դասընթացներին. դասընթացների ընտրությունը կարելի է կատարել ըստ ցանկության կամ Ձեր ունեցած կարիքների: Մեր դրամաշնորհատուների առատաձեռն աջակցության շնորհիվ մենք յուրաքանչյուր դասընթացի համար գանձում ենք մասնակցության նվազեցված վճար: Դասընթացի և մասնակցության համար գրացվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ՝ մեզ հետ կապ հաստատելով հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով կամ այցելելով [www.ebrd.com/knowhow/consultant](http://www.ebrd.com/knowhow/consultant) կայքը:



# Խորհրդատվություն փոքր բիզնեսներին

## Խորհրդատվության հիմունքները

### Կառավարման խորհրդատվության հիմունքներ

Այս հնգօրյա դասընթացը կառավարման խորհրդատվության հիմունքների լիարժեք և ամփոփ նկարագրություն է տրամադրում: Հաջողված առաջարկ գրելուց մինչև հաճախորդների հետ հարաբերությունները և ծրագրի կառավարման հիմունքները՝ սովորեք, թե ինչպես բարձրորակ խորհրդատվություն տրամադրել, որը համապատասխանում է արդյունաբերության տվյալ ճյուղում սահմանված չափորոշիչներին:

### Խորհրդատվական ծառայությունների մարքեթինգ և վաճառք

Բազմաթիվ փոքր և միջին բիզնեսներ երբեք չեն մտածել արտաքին խորհրդատուի ներգրավման մասին: Այս քառօրյա դասընթացը, որի ընթացքում կքննարկվեն Ձեր ծայրը լսելի դարձնելը, հաջողված առաջարկներ գրելը և հաճախորդների հետ հարաբերությունների կառավարումը, կօգնի Ձեզ ավելի լայն մասշտաբով և ավելի արդյունավետ կերպով շուկա հանել Ձեր խորհրդատվական ծառայությունները, ինչպես նաև հնարավորություն կտա Ձեզ ավելի շատ հաճախորդներ գրավել:

## Ձեր խորհրդատվական պրակտիկան

### Խորհրդատվական բիզնեսի հիմնումը

Եթե ունեք բիզնեսի իմացություն կամ տեխնիկական գիտելիքներ ու փորձ, որոնք, Ձեր կարծիքով, արժեքավոր են փոքր և միջին բիզնեսների համար, ապա այս երկօրյա դասընթացը կօգնի Ձեզ սովորել, թե ինչպես վերածել այն հաջողված խորհրդատվական բիզնեսի՝ անդրադառնալով բիզնես սկսելու համար իրավական դաշտի իմացությունից մինչև Ձեր առաջին հաճախորդների և բիզնեսի կառավարման եսկան հմտությունների ձեռքբերման քայլերին: Սովորեք, թե ինչպես կարելի է օգտագործել Ձեր փորձառությունը՝ տրամադրելու այնպիսի բարձրորակ խորհրդատվություն, որի համար պատրաստ են վճարել փոքր բիզնեսները:

## Խորքային խորհրդատվության հմտություններ

### Բիզնեսի դիագնոստիկա

Ախտորոշիչ ճիշտ գործիքների ընտրությունից մինչև դրանց օգտագործումը՝ սովորեք թե ինչպես կարելի է գտնել Ձեր հաճախորդի խնդրի բուն պատճառը և համապատասխան լուծումներ առաջարկել: Այս եռօրյա դասընթացը, որը կենտրոնանում է հիմնականում իրականացման վրա, ամրապնդում է Ձեր վերլուծական և խորհրդատվական կարողությունները՝ օգնելով Ձեզ այնպիսի արդյունքներ մատուցել, որոնք իսկապես արդիական են Ձեր հաճախորդների համար:

### Խորհրդատվական բիզնեսի կառավարում

Ձարգացրեք բիզնեսի կառավարման Ձեր հմտությունները մասնակցելով այս եռօրյա դասընթացին, որը նախատեսված է խորհրդատվական բիզնեսների սեփականատերերի և կառավարիչների համար: Այս դասընթացում քննարկվում են հաճախորդների նոր խմբերի նկատմամբ հասանելիությունից մինչև տաղանդի և ռեսուրսների կառավարման թեմաները: Սովորեք, թե ինչպես կարող եք Ձեր բիզնեսն ավելի արդյունավետ, մրցունակ և շահույթաբեր դարձնել:

### Խորհրդատվական ծրագրի կառավարում

Այս քառօրյա դասընթացը կտրամադրի Ձեզ ծրագրի կառավարման այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են հաճախորդներին բարձրորակ և արդյունավետ ծրագրեր տրամադրելու համար: Մշակեք գաղափարների, մեթոդաբանությունների, հենքերի ու շրջանակների, ինչպես նաև գործընթացների գործիքակազմ, որը կօգնի Ձեզ բավարարել բարդ խորհրդատվական ծրագրերի պահանջները և ավելի մեծամասշտաբ ու ավելի բազմակողմանի ծրագրեր առաջարկել Ձեր հաճախորդներին: